ԿԱՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ՂԱՐԻԲՅԱՆ

ԾՈԱԶԱՏԿԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Ծռազատկի խնդրին նվիրված մեր նախորդ հոդվածում նշել ենք, որ էասյան եւ իրիոնյան զատկացուցակների տարբերությունների պատճառով մեկ 532-ամյակի ընթացքում 4 անգամ (95+95+95+247) պատահում էր այնպես, որ այդ զատկացուցակներով առաջնորդվող Եկեղեցիների Զատկի օրը չէր համընկնում[1]: Ծռազատիկները մեծ խնդիրներ էին առաջացնում, քանի որ կապված էին Ս. Հարության տոնակատարման օրվա հետ, իսկ Ս. Հարության տոնը առանցքային տեղ է գրավում քրիստոնեական տոնացույցում: Ս. Հարության օրը ուղենշային է շարժական տոների մեծ մասի համար. եթե չէր համընկնում Զատիկը, տարբերվում էին նաեւ մյուս շարժական տոների օրերը, ինչն առավել էր սրում խնդիրը: 532-ամյա շրջանում ծռազատիկ հանդիպում է 18-րդ, 113-րդ, 208-րդ եւ 455-րդ տարիներին: Հայկական զատկացուցակների այս տարիներին Լուսնի ավագ լրումը լինում էր կիրակի՝ ապրիլի 6-ին, իսկ Զատիկը տոնվում էր մեկ շաբաթ անց[2]: Ծռազատկի թվականները պարզելու համար վերոնշյալ թվերը կարող ենք գումարել զատկացուցակի գործադրման առաջին թվականին՝ 552-ին: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ առաջին ծռազատիկը հանդիպել է Ալեքսանդրիայի 561 թ. ժողովից ութ տարի անց[3]: Այս ծռազատկի ճշգրիտ ժամանակի վերաբերյալ Մաղաքիա արք. Օրմանյանը գրում է. «Այդ ծռութիւնը շուտ ալ տեղի ունեցաւ, վասն զի յետ ութ ամի երեւեցաւ եղծումն իրացն, այսինքն է՝ էասի 561 թ. կազմած շրջանէն 8 տարի ետքը, եւ իրոք ալ 570-ին ճշմարտուած է այդ տարբերութիւնը կամ

[1] *Տե՛ս* Կ. ՍԱՐԿ. ՂԱՐԻԲՅԱՆ, *Ծռազատկի առաջացման պատճառների շուրջ, «Էջմիածին», 2019, Զ., էջ 11–23:*

[2] *Տե՛ս* ԿԻՒՐԵՂ ՍԵԲԱՍՏԵԱՆ, *Բուն տօմար Հայոց, Կ. Պոլիս, 1760, էջ 19:*

[3] *Տե՛ս «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909, էջ 44:*

առաջին ծռազատիկը»[4]։ *570 թ. ծռազատկի մասին մեր մատենագիրների տեղեկությունները սահմանափակվում են այսքանով։*

Հաջորդ երկու՝ 665 եւ 760 թթ. ծռազատիկների մասին մատենագրական տեղեկությունները նույնպես սակավ են։ Մաղաքիա արք. Օրմանյանը նույնիսկ խոսում է դրանց բացակայության մասին. «[Ծռազատիկ] 570 թուականէն ետքը երկու անգամ եւս տեղի ունեցած էր 665-ին եւ 750-ին, 95 տարիներու հեռաւորութեամբ, որոնց մասին պատմական յիշատակներ չեն հասած»[5]։

Մատենագիրների լռությունը կարող էր պայմանավորված լինել այն հանգամանքով, որ այս ժամանակաշրջանում Զատկի տոնակատարման հարցի շուրջ շարունակում էին վիճել Եկեղեցու նշանավոր աթոռներից Հռոմը եւ Ալեքսանդրիան, այդ վեճերը շարունակվեցին մինչեւ Թ. դար[6]։ Քրիստոնյա Արեւմուտքից քաղաքական իրավիճակի պատճառով մեկուսացած Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում Զատկի տոնակատարման օրվա չհամընկնելը կարող էր լուրջ քննարկումների պատճառ չդառնալ։ Բացի այդ՝ նշված դարերում Հայ Եկեղեցուն լծակից Ասորական Եկեղեցին եւս առաջնորդվում էր էասյան զատկացուցակով։ Այսինքն՝ Քույր եկեղեցու հետ այս հարցում խնդիրներ չկային։

Մաղաքիա արք. Օրմանյանը 665 թ. ծռազատիկը կապում է Անանիա Շիրակացու տոմարական գործունեության հետ[7]։ Նրա տեսակետի իրավացիության մասին է վկայում նաեւ այն հանգամանքը, որ Անանիա Շիրակացին իր «Զատկի ճառում» մանրամասն քննում է ծռազատկի հանգամանքները եւ սերունդներին պատվիրում հավատարիմ մնալ էասյան զատկացուցակով Զատիկը տոնելուն եւ խուսափել նզովքի տակ ընկնելուց[8]։ 665 թ. տեղի ունեցած ծռազատիկը տոմարական մեծ նշանակություն ունեցող իրադարձություն էր ժամանակի համար։ Առաջացած խնդիրը կարող էր դրդել ժամանակի կաթողիկոսին ուսումնառությունից ետ կանչել Անանիա Շիրակացուն, որպեսզի վերջինս լուծեր հրատապ դարձած տոմարական խնդիրները[9]։

---

[4] Մաղաքիա արք. Օրմանեան, *Ազգապատում, հտ. Ա., Ս. Էջմիածին, 2001, էջ 663։*

[5] Մ. արք. Օրմանեան, *Ազգապատում, հտ. Ա., էջ 1361—1362։*

[6] *Տես* Զ. եպս. Տէր-Յակոբեան, *Զատիկի հարցը, Պէյրութ, 1971, էջ 47—49։*

[7] Մ. արք. Օրմանեան, *Ազգապատում, հտ. Ա., էջ 870։*

[8] *Տես* Ա. Աբրահամեան, *Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երեւան, 1944, էջ 298—299։*

[9] *Տես* Գր. Բրուտեան, *Անանիայի «Քննիկոնի» ստեղծման հանգամանքների մասին, «Բազմավէպ», 2016, թիւ 1—2, էջ 24։*

760 թ. ծռազատկի մասին մեր մատենագիրների երկերում հիշատակություններ առկա չեն: Հիշատակություն է պահպանել բյուզանդացի պատմիչ Թեոփանես Խոստովանողը: Հեղինակը գրում է. «Այդ տարի ծռազատիկ եղավ, Արեւելքի ուղղափառները Զատիկ արեցին ապրիլի 6-ին, իսկ մոլորված հերետիկոսները՝ 13-ին»[10]*: Հաշվի առնելով Թեոփանես Խոստովանողի բյուզանդացի լինելը՝ խնդրի վերաբերյալ նրա դիրքորոշումը հասկանալի է: Ուշագրավ է այն հանգամանքը, որ բյուզանդացի հեղինակները, ի տարբերություն հայ մատենագիրների, ծռազատկին անդրադառնալիս լռում են այդ տարիներին իրիոնյան համակարգով հաշվարկված Զատկի՝ հրեական պասեքի հետ համընկնելու մասին:*

Առաջին 532-ամյա շրջանի հաջորդ ծռազատիկը տեղի է ունեցել 760-ից 247 տարի անց՝ 1007 թ.: Մաղաքիա արք. Օրմանյանը նշում է, որ 247 տարվա ընդմիջումը ծռազատկի մոռացության պատճառ էր դարձել[11]*: Այս ծռազատկի մասին վկայություններ ունեն Սամուել Անեցին*[12]*, Մատթեոս Ուռհայեցին*[13] *եւ Սմբատ Սպարապետը*[14]*: Սամուել Անեցին միայն նշում է, որ հույների մոլորության պատճառով* «ոչ վառեցաւ լոյսն յԵրուսաղէմ յանմ աւուր, վասն որոյ կոտորեցին անօրէնքն ի քրիստոնէիցն ԺՌ...»[15]*: Այս դեպքերին մանրամասն անդրադառնում է Մատթեոս Ուռհայեցին.* «....մեծ խռովութիւն եղեւ ի քաղաքն Կոստանդնուպոլիս եւ ամենայն աշխարհն Յունաց, վասն զի աւուր մեծի Զատկին մոլորեալ եղեն ի կատարելոյ զսուրբ Յարութեան օրն Զատկին. եւ ամենայն վարդապետք տանն Յունաց ընդ ստութեամբ փակեցին զուղղորդ պատուիրանս Աստուածաշունչ Գրոց եւ զսուտ եւ զխաբեբայ տումարն հակառակամարտն Իրիոնի ընկալան, եւ զնշմարտագիր տումարն մեծին Անդրէասայ ոչ ընկալան, այլ ածին նոքա զլրումն Զատկին ի կիրակիէն ի շաբաթն, եւ զկնի աւուր միոյ Զատիկ արարին, զոր պարտ էր զկնի ութ աւուրն կատարել. եւ ամենայն տանն Յունաց մոլորեալ ի սուրբ Զատկէն, եւ եղեւ սուգ մեծ ի վերայ սուրբ եկեղեցւոյն Կոստանդնուպոլսի, եւս առաւել ի սուրբ եւ յաստուածակերտ քաղաքն յԵրուսաղէմ, զի

[10] Թեոփանես Խոստովանող, *Ժամանակագրություն, թարգմանություն բնագրից, առաջ. եւ ծանոթ.՝ Հր. Բարթիկյանի, Երեւան, 1983, էջ 143:*

[11] *Տե՛ս* Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Ազգապատում, հտ. Ա., էջ 1362:*

[12] *Տե՛ս «Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. Ժամանակագրութիւն», աշխ.՝ Կ. Մաթեւոսյանի, Երեւան, 2014, էջ 181:*

[13] *Տե՛ս* Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն, գրաբար բնագիրը՝ Մ. Մելիք-Ադամյանի եւ Ն. Տեր-Միքայելյանի, Երեւան, 1991, էջ 48–52:*

[14] *Տե՛ս «Տարեգիրք Սմբատայ Սպարապետի», Փարիզ, 1859, էջ 42–44:*

[15] *«Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. Ժամանակագրութիւն», էջ 181:*

հպարտութեամբ բարձրավզեալ ածին Զատիկն ի աւուր Ծառզարդարին....»[16]։ *Մատթեոս Ուռհայեցին, Սամուել Անեցու նմանությամբ, ծռազատկի դեպքերը կապում է Քրիստոսի Գերեզմանին լույսի հայտնվելու հետ՝* «Եւ յայնմ Զատկի ոչ վառեցաւ լոյս կանթեղացն ի սուրբ Գերեզմանն»[17]։ *Երուսաղեմում քրիստոնյա ազգերի միջեւ տեղի ունեցած խառնաշփոթից օգտվելով՝ տեղի «ազգն անօրինաց» կոտորեց շուրջ տասը հազար հավատացյալների.* «...եւ լցաւ սուրբ Գերեզմանն Քրիստոսի արեամբ աղօթաւորացն...»[18]։ *Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ՝ Վասիլ կայսը, տեղի ունեցած դեպքերի պատճառն իմանալու համար, իր մոտ է կանչում հույն վարդապետներին։ Վերջիններս հակասական պատասխաններով փորձում են մոլորեցնել նրան։ Կայսրը կանչում է Հովսեփ Ընծայեցի եւ Հովհաննես Կոզեռն հայոց վարդապետներին։ Վերջիններս, հրաժարվելով Կ. Պոլիս գնալ, կայսեր հարցերին պատասխանում են նամակներով։ Նամակը, սակայն, չի գոհացնում հույներին, եւ կայսեր խնդրանքով հայոց Սամվել վարդապետը, որը գիտակ ու երեւելի այր էր, մեկնում է հույների հետ բանավիճելու։ Մատթեոս Ուռհայեցու հավաստմամբ՝ վերջինս հաղթում է հույն վարդապետներին եւ ապացուցում հայերի ճշմարտացիությունը*[19]։ *Գրեթե նույն կերպ է ներկայացնում դեպքերը նաեւ Սմբատ Սպարապետը*[20]։

Պետք է նշել, որ այս ծռազատկի հետ կապված խնդիրներ լինում էին միայն Հույն Եկեղեցու հետ, քանի որ ասորիները շարունակում էին Զատիկը տոնել էասյան զատկացուցակով, իսկ Հռոմի Եկեղեցու հետ այս շրջանում Հայ Եկեղեցին որեւէ առնչություն դեռեւս չուներ։ 1007 թ. ծռազատիկը առաջին 532-ամյակի վերջին ծռազատիկն էր։

Հերթական ծռազատիկը տեղի է ունենում 1102 թ.։ Դեպքերի հետ կապված հիմնական սկզբնաղբյուրը այս պարագայում եւս Մատթեոս Ուռհայեցին է։ Ծռազատկի մասին համառոտ հիշատակություններ են առկա նաեւ Միքայել Ասորու[21] *եւ Սամուել Անեցու երկերում։ Սամուել Անեցին գրում է.* «Ի տօնի Ծառզարդարի ծռազատիկ արարի տասն ազգ.

---

[16] Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն, էջ 48։*

[17] *Անդ, էջ 48–50։*

[18] *Անդ, էջ 50։*

[19] *Տէս անդ։*

[20] *Տէս «Տարեգիրք Սմբատայ Սպարապետի», էջ 42–43։*

[21] *Տէս* Լ. Տէր-Պետրոսեան, *Ասորիների դերը հայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում ԺԲ.-ԺԳ. դարերում, Վենետիկ - Ս. Ղազար, 1989, էջ 45–46։*

Հայք եւ Ասորիք ուղիղ կացին...»[22]։ *Մաղաքիա արք. Օրմանյանը գրում է, որ 1102 թ. ծռազատիկն առավել մեծ նշանակություն կունենար,* «...որովհետեւ լատիններ ալ Հայոց հետ շփման մէջ կը գտնուէին, եւ յոյներու հետ համաձայն էին Իրիոնեան տոմարին հետեւողութեամբ, եւ Հայոց դէմ եղողներու թիւը կ'աճէր։ Վրացիք արդէն Յունաց հետ կանուխէն համաձայնած էին, միայն Ասորիք կը մնային հայերուն հետ համաձայն, բայց վերջէն անոնք ալ ահաբեկ լինէին եւ դարձան ի կողմն Յունաց, եւ ուրացան զդաշինսն զոր ունէին ընդ Հայք...»[23]։ *Մատթեոս Ուռհայեցին եւ Սամուել Անեցին վկայում են, որ Զատկի օրը շփոթեց տասը ազգ։*

Նախորդ ծռազատիկների դեպքում, ինչպես տեսանք, մատենագիրները մոլորության մեջ մեղադրում են միայն Հույն Եկեղեցուն։ Մատթեոս Ուռհայեցու՝ տասը ազգի մասին հիշատակությունից, ինչպես նաեւ «...Ասորիք, որ յՈւռհայ էին, ահաբեկեալք լինէին, դարձան ի կողմն Յունաց»[24] *տեղեկությունից կարող ենք եզրակացնել, որ իրիոնյան զատկացուցակին հետեւող Հռոմի եւ Բյուզանդիայի Եկեղեցիները մյուս Եկեղեցիներին պարտադրում էին ընդունել իրենց զատկացուցակները։ Տասը ազգի մոլորության պատճառ կարող էին հանդիսանալ նաեւ խաչակրաց արշավանքները, որոնց ընթացքում Հռոմեական Եկեղեցին կարող էր Արեւելքի Եկեղեցիներին պարտադրել իրիոնյան զատկացուցակի ընդունումը։ Այս ծռազատիկը տարբերվում էր նաեւ նրանով, որ ավելի շատ շրջաններում են բախումներ տեղի ունենում։ Միքայել Չամչյանը հայերի նկատմամբ հույների բացասական վերաբերմունքը պայմանավորում է նաեւ Հայոց Թորոս իշխանի գործունեությամբ[25]։ Հուզումներ են տեղի ունենում Ուռհա, Անտիոք քաղաքներում եւ ողջ Կիլիկիայում։ Միքայել Ասորին առանձնահատուկ հիշատակում է Մելիտենեն՝ որպես բախումների վայր[26]։ Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ՝ հույները փորձում էին ստիպել հայերին ընդունել իրենց «անհաստատ» տոմարը, սակայն՝ ապարդյուն։ Ուռհայի հայ քահանաները դիմում են ժամանակի կաթողիկոս Գրիգոր Բ. Վկայասերին (1066—1105 թթ.)։ Վերջինս պատասխանում է մի գրությամբ, որն ամբողջությամբ պահպանված է Մատթեոս Ուռհայեցու*

---

[22] *«Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. ժամանակագրութիւն», էջ 202։*

[23] Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Ազգապատում, հտ. Ա. էջ 1547. նաեւ տե՛ս* ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, *Ժամանակագրութիւն, էջ 310—312։*

[24] ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, *Ժամանակագրութիւն, էջ 312։*

[25] *Տե՛ս* Մ. ՉԱՄՉԵԱՆ, *Պատմութիւն Հայոց, հտ. Գ., Վենետիկ, 1784, էջ 23։*

[26] *Տե՛ս* Լ. ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ, *նշվ. աշխ., էջ 45—46։*

երկում[27]։ Գրիգոր Բ. Վկայասերն իր թղթում հայերին հորդորում է հավատարիմ մնալ Հայոց Եկեղեցու ավանդույթներին եւ կանոններին։ Խոսելով Երուսաղեմում Զատկի տոնակատարման մասին՝ Հայոց հայրապետը նշում է, որ հույները «կեղծաւորութեամբ վառեցին զլոյսն եւ ոչ ճշմարտութեամբ եւ խաբեցին զազգն իւրեանց յօտար հրոյ վառեցին զաստուածային կանթեղսն. այլ ստուգապէս վառեցաւ ի Զատկին, որ եւ վկայեցին ամենայն հաւատացեալք, որք եւ վկայ էին ի սուրբ քաղաքն Երուսաղէմ»[28]։

Հաջորդ ծառազատիկը տեղի է ունեցել 95 տարի անց՝ 1197 թ.։ Մեր մատենագիրներից այս ծառազատկի մասին հիշատակում են Կիրակոս Գանձակեցին[29], Սամուել Անեցին[30] եւ Սմբատ Սպարապետը[31]։ Կիրակոս Գանձակեցին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում հայ-վրացական վեճերի մասին[32]։ Հեղինակը, բառացի մեջբերելով Անանիա Շիրակացու «Զատկի ճառից», խոսում է Անդրեասի 200-ամյա տոնացույցի լրանալուց հետո քրիստոնեական Եկեղեցում սկսված խառնաշփոթի, Ալեքսանդրիայում տեղի ունեցած ժողովի, էասյան եւ իրիոնյան զատկացուցակների տարբերությունների մասին՝ «ուղիղ» համարելով էասյան զատկացուցակը։ Հայ-վրացական վեճերին լուծում տալու եւ հետագա բախումներից խուսափելու նպատակով՝ վրաց Թամար թագուհու եւ Զաքարիա Սպարապետի նախաձեռնությամբ մեկական հայ ու վրաց իշխան են ուղարկվում Երուսաղեմ[33]։ Ինչպես նախորդ ծառազատիկների առնչությամբ իմացանք, «ուղիղ» էր համարվում այն Եկեղեցու օրացույցը, որի նշած Զատկի օրը

---

[27] *Տե՛ս «Թուղթ Գրիգորի Վկայասիրի Հայոց Վերադիտողի վասն Զատկի», գիտաքնն. բնագիրը՝ Զ. Էյնաթյանի, «Բանբեր Մատենադարանի», թիվ 24, Երեւան, 2017, էջ 272–274։*

[28] Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն, էջ 316։*

[29] *Տե՛ս «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», էջ 200–203։*

[30] *Տե՛ս «Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. Ժամանակագրութիւն», էջ 234։ Սամուել Անեցու ժամանակագրությունը ավարտվում է 1163 թ.։ Հետագայում ուրիշները, նրա ժամանակագրությունը շարունակելով, հասցնում են մինչեւ 1776 թ.։*

[31] *Տե՛ս «Տարեգիրք Սմբատայ Սպարապետի», էջ 108–109։*

[32] *Ինչպես գիտենք, Հայ Եկեղեցուց Վրաց Եկեղեցու բաժանումը տեղի է ունեցել է. դարասկզբին, սակայն տոմարական առումով Վրաց Եկեղեցին առանձնանում է միայն Ալեքսանդրիայի տոմարագետների ժողովից եւ դրան հակառակ իրիոնյան զատկական կարգադրությունից 220 տարի անց՝ Վրաց քրոնիկոնի տարեհաշվի սկզբնավորումով (տե՛ս* Գր. Բրուտեան, *Վրաց եւ Աղուանից օրացույցներն ըստ Անանիա Շիրակունու տոմարի. դրանց կառուցուածքին եւ ծագմանը վերաբերող որոշ խնդիրներ, «Հայաստանը եւ քրիստոնեայ Կովկասը» գիտաժողով նուիրուած Կովկասեան Աղուանքում եւ Վրաստանում քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակին. Զեկուցումներ եւ զեկուցումների դրոյթներ», Երեւան, 2015, էջ 58–68)։*

[33] *Տե՛ս «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», էջ 201։*

Քրիստոսի գերեզմանի վրա կանթեղը հրաշքով վառվում էր՝ «...եւ այսոցիկ դատավճիռ լուցումն կանթեղին՝ որ ի Սուրբ Գերեզմանին Քրիստոսի...»[34]: *Կիրակոս Գանձակեցին հաղորդում է, որ վեճը լուծվեց քաղաքի կառավարչի անմիջական մասնակցությամբ.* «Բայց զվերակացութիւն քաղաքին Տաճիկք ունէին. հարցին ցքրիստոնեայսն. թէ ե՞րբ իցէ Զատիկն ձեր. պատասխանեցին որ ի յունաց եւ յայլոց ազգաց. թէ յայսմ կիրակի: Իսկ որ ի Հայոց էին, ասացին. ոչ յայսմ կիրակէի, այլ ի միւս կիրակէի»[35]: *Քաղաքի վերակացուն հրամայում է հույների Զատկի օրը տաճարում եղած բոլոր լույսերը մարել, փակել է տալիս դռները ու կնքում իր մատանիով, որ ոչ ոք չկարողանա ներս մտնել.* «Եւ իբրեւ անց օրն այն եւ եղեւ երեկոյ, եւ սպասէին լուցման կանթեղի, հրամայեաց իշխանն անարգանօք հանել զամենեսեան եւ գանիւ մեծաւ, իբրեւ զտգէտս եւ զսուտս, բաց ի Հայոց»[36]: *Նույնը կրկնեցին նաեւ մեկ շաբաթ անց՝ հայերի Զատկի օրը.* «...մինչդեռ ի պաշտաման եւ յաղօթս էին ի տասներորդ ժամուն՝ ազդումն եղեւ ամենեցուն, եւ վաղվաղակի լուցաւ կանթեղն առանց ձեռաց»[37]: *Երբ Զաքարեն ու մյուս հայերը իմացան Երուսաղեմում տեղի ունեցած դեպքերի մասին, ուրախացան եւ ամրացան Հայոց ուղիղ հավատի մեջ: Արժեքավոր է նաեւ Սամուել Անեցու տեղեկությունը.* «...խանգարեցին զՋատիկն եւ ընդ աստուածասպանսն տօնեցին այլազգք, իսկ ի կատարման սրբոյ Յարութեան աւուրց, բերին յեղբարց մերոց զաւետիս լուցման կանթեղաց ի Գերեզմանէն Քրիստոսի ի մեր Զատկին, եւ յամօթ եղեն հակառակողքն...»[38]:

1197 թ. ծռազատկի մասին ուշագրավ տեղեկության ենք հանդիպում ասորի մատենագիր Բար-Հեբրեոսի եկեղեցական ժամանակագրության մեջ: Հեղինակը հաղորդում է, որ բացի ասորիներից, ղպտիներից ու հայերից՝ քրիստոնյա մյուս ազգերը շփոթեցին Սուրբ Հարության մեծ տոնի օրը: Հատկապես հետաքրքիր է հեղինակի տեղեկությունը հայ-վրացական բախումների մասին. «Իբերոները, տեսնելով, որ հայերն իրենց հետ չեն տոնում, զայրացան նրանց վրա եւ այրեցին մի հայկական եկեղեցի, որտեղ հրի ճարակ դարձավ չորս մարդ: Լսելով այդ՝ հայերը հավաքվեցին տարբեր կողմերից եւ շուրջ 40 000 հոգով որոշեցին պատերազմել իբերոների հետ: Սակայն վերջիններս եկեղեցու գնի դիմաց հայերին տվեցին հարյուր հազար

[34] *Անդ:*
[35] *Անդ, էջ 201:*
[36] *Անդ, էջ 202:*
[37] *Անդ:*
[38] *«Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. Ժամանակագրութիւն», էջ 233:*

դինար, իսկ յուրաքանչյուր այրված մարդու համար հազար դինար, եւ նրանք հաշտվեցին»[39]։ *Մ. Չամչյանն այս դեպքերի մասին խոսելիս, հղում անելով նույն Բար-Հեբրեոսի երկին, նշում է ոչ թե 4, այլ 40 զոհի մասին*[40]։ *Վերջինս դեպքերի հավանական վայր է համարում Տփղիս կամ Թիֆլիս քաղաքը։ Ուշագրավ է, որ հայ-վրացական վեճերին անդրադարձած Կիրակոս Գանձակեցին չի խոսում լուրջ բախումների մասին։ Այս դեպքերի մասին հետաքրքիր հոդված ունի Լեւոն Մելիքսեթ-Բեկը*[41]։ *Հեղինակը փորձում է պարզել դեպքերի վայրը եւ հասկանալ, թե որն է Բար-Հեբրեոսի նշած այրված եկեղեցին։ Լեւոն Մելիքսեթ-Բեկը հանգում է այն եզրակացության, որ դեպքերը տեղի են ունեցել Թիֆլիս քաղաքում, եւ հրդեհվել է Ս. Քառասուն մանկանց եկեղեցին։ Նա կասկածի տակ է դնում զոհված քառասուն հայի, ինչպես նաեւ հավաքված քառասուն հազար հայ բնակչության մասին տեղեկությունները՝ դրանք համարելով հեղինակի թվերը համապատասխանեցնելու ցանկության հետեւանք*[42]։

Կիլիկիայում եւ հարեւան շրջաններում ծռազատիկը մեծ բախումներ չառաջացրեց, քանի որ Լեւոն թագավորն իր հեղինակությամբ ու հզորությամբ կարողացավ պաշտպանել Հայ Եկեղեցին հնարավոր հալածանքներից։ Սակայն բախումներ եղան Կ. Պոլսում եւ Բյուզանդիայի իշխանության ներքո գտնվող այլ քաղաքներում, որտեղ բազմաթիվ հայեր էին բնակվում. «Եւ զի կային բազում հայք ի Կոստանդինուպոլիս եւ յայլ քաղաքս իշխանութեան Յունաց՝ ձեռն արկին նեղել եւ տառապեցուցանել զնոսա՝ բռնադատելով զնոսա անել եւ կատարել զամենայն ծէսս ըստ Յունաց՝ թէ ի տօնս եւ թէ յայլ իրս, եւս եւ կրկին մկրտիլ եւ դրոշմիլ՝ եւ կրկին ձեռնադրիլ»[43]։ *Այս ամենի մասին տեղեկանալով՝ ժամանակի կաթողիկոս Գրիգոր Զ. Ապիրատը (1194–1203 թթ.), Լեւոն իշխանի հետ խորհրդակցելով, որոշում է Ներսես Լամբրոնացուն ուղարկել Կոստանդնուպոլիս։ Վերջինս իր հետ տանում էր Հայոց կաթողիկոսի ու Լեւոն իշխանի կողմից կայսերն ուղղված՝ հայերի նկատմամբ հալածանքները դադարեցնելու վերաբերյալ խնդրագիր։ Կ. Պոլսում Ներսես Լամբրոնացին լավ ընդունելության է արժանանում,* «զի հոչակեալ էր առ նոսա հրաշալի անուն իմաստութեան

[39] *Մեջբերումն ըստ՝* Լ. Տէր-Պետրոսեան, *Ասորիների դերը...., էջ 64–65։*

[40] *Տէս* Մ. Չամչեան, *Պատմութիւն Հայոց, հտ. Գ., էջ 161։*

[41] *Տէս* Л. Меликсет-Беков, О междоусобице в Тифлисе в 1197 году по поводу Кривой пасхи, «Известия Кавказского историко-археологического института в Тифлисе», т. III, Тифлис, *1925, էջ 49–56։*

[42] *Տէս անդ, էջ 58–60։*

[43] Մ. Չամչեան, *Պատմութիւն Հայոց, հտ. Գ., էջ 162։*

եւ սրբութեան նորա»[44]: *Կայսերը հանդիպելով՝ հանձնում է խնդրագիրն ու փորձում* «քաղցրութեամբ բանից բերանոյ իւրոյ» *համոզել նրան: Բայց քանի որ հույները թշնամաբար էին տրամադրված հայերի նկատմամբ,* «ոչ ինչ շահեցաւ ի նոցանէ»[45]:

Հաջորդ՝ 1292 թ. ծռազատիկը նախորդներից տարբերվում է նրանով, որ անհամաձայնություններ են լինում հենց հայերի մեջ: Քաղաքական իրավիճակը, մեղմ ասած, անկայուն էր: Կիլիկյան Հայաստանը գտնվում էր մամլուքների չընդհատվող արշավանքների թիրախում: Երկրի պետական իշխանությունն ստեղծված իրավիճակից միակ ելքը համարում էր դավանաբանական զիջումների դիմաց Հռոմից խոստացված օգնությունը: Բարձրաստիճան հոգեւորականների մի մասը համաձայն էր քաղաքական այս ուղեգծին: Ստեղծված իրավիճակում հանդիպում է հերթական ծռազատիկը, որը լուրջ բախումներ էր առաջացնում էասյան եւ իրիոնյան զատկացուցակներով Զատիկը տոնող Եկեղեցիների միջեւ: Ստեփանոս Օրբելյանը, այս դեպքերի մասին խոսելիս, ծռազատիկը տեղադրում է Գրիգոր Է. Անավարզեցի կաթողիկոսի (1293—1307 թթ.) գահակալման երկրորդ տարում[46]*: Մաղաքիա արք. Օրմանյանը, անդրադառնալով Ստեփանոս Օրբելյանի վերոնշյալ տեղեկությանը, գրում է.* «Խօսքը, որ կարծես թէ Անաւարզեցիի կաթողիկոսութեան երկրորդ տարիին կ՚ակնարկէ, պէտք է իմանալ քիչ վերը յիշուած Ստեփանոս կաթողիկոսի երկրորդ տարիին վրայ.... վասն զի անհնար է 1295-ին տանիլ ծռազատիկի տարին»[47]:

Միքայել Չամչյանը հայերին գրում է. «...զի ոմանք ըստ ուղիղ հաշուի յապրիլի 6 կամէին տօնել ընդ Յոյնս եւ ոմանք շաբաթով միով յետոյ»[48]: *Մոլորության մասին է խոսում Հեթում Պատմիչը.* «Յայսմ ամի եւս մոլորեցան զՋատիկն Հայք, եւ Ասորիքն ընստորք»[49]: *Սպասվող ծռազատիկն արդեն սկսել էր հուզումների տեղիք տալ հայերի եւ լատինների միջեւ: Հետագա բախումներից խուսափելու նպատակով Հեթում թագավորը* «կոչեաց առ ինքն զՍտեփաննոս կաթողիկոս ի Հռոմկլայէ ի Սիս եւ հաւանութեամբ նորա

[44] *Անդ:*

[45] *Անդ:*

[46] *Տե՛ս «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա, 1861, էջ 327:*

[47] Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Ազգապատում, հտ. Բ., էջ 2021:*

[48] Մ. ՉԱՄՉԵԱՆ, *Պատմութիւն Հայոց, հտ. Գ., էջ 286:*

[49] *«Հեթում Պատմիչ Թաթարաց», յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն Հ. Մկրտիչ աթոռակալ վարդապետի Աւգերեան, Վենետիկ, 1842, էջ 85:*

հրամայեաց ժողով գումարել եպիսկոպոսաց եւ վարդապետաց ի քաղաքի անդ»[50]։ *Ժողովականները, քննության առնելով խնդիրը, որոշեցին Զատիկը տոնել ապրիլի 6-ին։ Ժողովի որոշումները պարտադրվեցին Կիլիկիայի բոլոր եկեղեցիներին։ Չնայած պարտադրանքին՝ որոշ «պարկեշտ» վանքերում եպիսկոպոսներից ու վարդապետներից շատերը չենթարկվեցին որոշմանը՝ հետագայում ենթարկվելով հալածանքների եւ աքսորի*[51]*։ Ժողովի որոշումներին չենթարկվեցին նաեւ Երուսաղեմում եւ բուն Հայաստանում։*

Անդրադառնանք 1539 թ. ծռազատկին։ Այս մասին հիշատակություն ունի Սամուել Անեցու շարունակողը։ Վերջինս պարզապես նշում է, որ «...Յոյնք արարին ծռազատիկ»[52]*։ Գարեգին եպս. Սրվաճտյանցի «Թորոս աղբար» գրքում պահպանվել է Ջերմուկի Ս. Սարգիս վանքի աբեղա Եղիայի 1550 թ. գրած «Յայսմաւուրքի» հիշատակարանը։ Հեղինակը պատմում է ծռազատկի հետ կապված՝ Երուսաղեմում տեղի ունեցած իրադարձությունները։ Նա սխալմամբ ծռազատկի թվական է համարում 1540 թ.։ Այս առնչությամբ Մաղաքիա արք. Օրմանյանը նշում է.* «Շփոթութիւնը կրնանք մեկնել, ըսելով թէ Հայոց 989 թուականը կը սկսէր 1539 նոյեմբէր 7-ին, եւ եթէ ջերմուկցին իր Յայսմաւուրքը աւարտեց 1539 նոյեմբերէ 1540 միջոցին, նոր Զատիկը չեկած, կրցաւ անցեալ Զատիկը միեւնոյն թուականին վերագրել եւ այնպէս յիշատակել»[53]*։ Եղիա աբեղան պատմում է, որ* «ազգն Հոռոմոց եւ Վրաց, Ղպտաց եւ Հապաշից»[54] *մեր Ծաղկազարդի օրը Զատիկ են տոնել։ Նախորդ ծռազատիկների ժամանակ տեղի ունեցած դեպքերից պարզ դարձավ, որ Զատկի ճիշտ լինելու չափանիշը Քրիստոսի Գերեզմանի վրա լույսի հրաշքն էր։*

Շարունակելով պատմությունը՝ հեղինակը հույներին մեղադրում է Զատկի օրը Քրիստոսի Գերեզմանի լույսը ոչ թե հրաշքով, այլ «չախմախ եւ քիպրիթ»-ով վառելու մեջ։ Այդ ամենը տեսնելով՝ տաճարի դռան մոտ գտնվող այլազգիները հռոմեացիների եւ հույների լույսը խավար անվանեցին՝ հայհոյելով ու անարգելով նրանց։ Մեր Զատկի օրը՝ շաբաթ երեկոյան, թափորի՝ Գերեզմանի շուրջը երկու անգամ պտտվելուց հետո լույսը հրաշքով վառվեց։ Այդ ամենի մասին փաստում են նաեւ այդտեղ

[50] Մ. ՉԱՄՉԵԱՆ, *Պատմութիւն Հայոց, հտ. Գ., էջ 286։*
[51] *Տե՛ս անդ։*
[52] *«Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. ժամանակագրութիւն», էջ 312։*
[53] Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Ազգապատում, հտ. Բ., էջ 2605։*
[54] ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՍՐՈՒԱՆՋՏԵԱՆՑ, *Թորոս աղբար, մասն Բ., Կ. Պոլիս, 1885, էջ 454—455։*

գտնվող այլազգիները[55]։ Եղիա աբեղան որեւէ հիշատակություն չունի Երուսաղեմում հայերի եւ հույների բախումների վերաբերյալ։ Այս մասին տեղեկություն ենք գտնում Աստվածատուր եպիսկոպոսի գրքում։ Հեղինակը պատմում է, որ Երուսաղեմի Հայոց Աստվածատուր պատրիարքի գահակալության տարիներին պատահած հերթական ծռազատիկը մեծ խռովությունների առիթ է դարձել Հայ եւ Հույն Եկեղեցիների միջեւ։ Հայերն ստիպված են լինում դիմել Օսմանյան կառավարչին. «...եւ ի դատարանէ Մահմուդ Փաշայի առին մուրհակ. առանձին կատարել զտօն պասեին»[56]։ Հույները, այս մասին իմանալով, մեծ աղմուկ են բարձրացնում եւ բազում նեղություններ ու վնասներ են պատճառում հայերին։ Հեղինակն այստեղ նույնպես խոսում է լույսի խնդրի մասին՝ նշելով. «...զի լոյսն զորմէ ասէք ել այն յառաջագոյն վասն մեր»[57]։ Աստվածատուր պատրիարքը, տեսնելով, որ բռնություններ են գործադրում իր ժողովրդի նկատմամբ, դիմում է քաղաքի դատավորին։ Վերջինս զենքի ուժով փորձում է կանխել բախումները[58]։

Նախորդ ծռազատիկների փորձից ելնելով՝ հաջորդ՝ 1634 թ. ծռազատկից առաջ Երուսաղեմի հայոց պատրիարք Գրիգոր Պարոնտերը, բախումներից խուսափելու համար, փորձում է բանակցություններ սկսել Հույն Եկեղեցու հետ։ Նույնիսկ երկու-երեք անգամ հույների առաջնորդներին ճաշի է հրավիրում՝ ծռազատկի խնդիրը քննարկելու։ Սակայն վերջիններս արհամարհում են պատրիարքի նախաձեռնությունը՝ սպառնալով նույնիսկ նրա կյանքին[59]։ Ծռազատկի խնդիրը լուծելու համար միջամտում են տեղական իշխանությունները։ Հույներին հաջողվում է Դամասկոսի կուսակալին, որի ենթակայության տակ էր գտնվում Երուսաղեմը, բազմաթիվ կաշառքներով իրենց կողմը գրավել։ Մեծ թվով հունադավան ուխտավորներ հավաքվել էին Երուսաղեմում ու սպառնալիքներով փորձում էին ստիպել հայերին իրենց հետ Զատիկ տոնել։ Երուսաղեմի հայոց պատրիարքը 20 000 դահեկան է ծախսում քաղաքի կառավարչին եւ դատավորին համոզելու համար, որ վերջիններս կանխեն հույների ոտնձգությունները։ Կառավարչի եւ դատավորի հրամանով

[55] Տե՛ս անդ։

[56] ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊՍ. ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆՑ, *Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի*, հտ. Ա., Երուսաղէմ, 1890, էջ 254։

[57] Անդ։

[58] Տե՛ս անդ։

[59] Տե՛ս Մ. ՉԱՄՉԵԱՆ, *Պատմութիւն Հայոց*, հտ. Գ., էջ 615։

զինաթափում են բոլոր հունադավաններին[60]*: Այդ նույն ժամանակ Երուսաղեմ է ժամանում ծովակալ Ահմեդ փաշան, որի հանդերձապանը հայազգի Ավետիք Բաղիշեցին էր: Վերջինս, տեղեկանալով Երուսաղեմում տեղի ունեցող իրադարձությունների մասին, Ահմեդ փաշայից օգնություն է խնդրում: Մ. Չամչյանի հաղորդած տեղեկության համաձայն՝ փաշայի ուղարկած զորքերը հույների Զատկի օրը պաշարում են եկեղեցին՝ արգելելով վերջիններիս տոնակատարել: Մ. Չամչյանի հիշատակության հետ համաձայն չեն հետագայի ուսումնասիրողները: Այս առնչությամբ Աստվածատուր եպիսկոպոսը գրում է.* «Սակայն ի պատմութեանն եւ ի դատաստանական գիրս երեւի փոքր-ինչ անհամաձայնութիւն բանից, զի ի պատմութեան գրի. «Եկեալ հազարապետին ի բաց վանեց անտի զՅոյնս եւ փակեաց զդուռն»: Այլ վաղ Յունաց Զատկին բացայայտ չգրէ ինչ, թէ յորո՞ւմ եւ որպէ՞ս տօնեցին զՋատիկն զի ի ժամանել նամակի կուսակալին Դամասկոսի եւ հազարապետին, եւ ի դատաստանի ի պատուիրելն փոխանորդի Յունաց չընդդիմանալ Հայոց ըստ հրամանի. Նա պատասխանի առնէ յատենի անդ, «թէ Յոյնք տօնեցին զՋատիկն իւրեանց միով եօթնեկաւ յառաջ եւ սովորական լոյսն ել վասն նոցա....»: Ի բանից աստի բացայայտ երեւի թէ Յոյնք արարեալ են Զատիկն»*[61]*: Ինչպես նախորդ ծռազատիկների ժամանակ, այս անգամ նույնպես, ըստ մեր մատենագիրների, Քրիստոսի Գերեզմանի վրա լույսի իրական հրաշքը տեղի է ունենում մեր Զատկի օրը*[62]*:*

Առաքել Դավրիժեցին հիշատակություն ունի մեկ հայ քահանայի եւ երկու աշխարհականի սպանության մասին: Հեղինակը նշում է, որ Մուրադ սուլթանի օրոք՝ 1634 թ., հույները ծռազատիկ արեցին: Այդ ժամանակ «...էր վէզիր Բայրամ փաշայն, որ էր ինքն յազգէն Յունաց. վասն որոյ արար երեսպաշտութիւն ազգին Յունաց, եւ զազգն Հայոց՝ թիւր ծանոյց թագաւորին, որոյ վասն բարկացաւ թագաւորն եւ եսպան ի Հայոց մեկ քահանայ եւ երկու աշխարհական»*[63]*: 1634 թ. ծռազատկին անդրադարձել է նաեւ Գրիգոր Դարանաղցին: Նա միակ հեղինակն է, որ հիշատակում է «հոռոմադավանների»՝ հրեաների հետ նույն օրը Զատիկ տոնելու մասին: Հեղինակը նշում է, որ «հոռոմադավանները», հրեաների հետ Զատիկ տոնելով, ընկնում են Նիկիայի հայրապետների (318) սահմանած նզովքի*

---

[60] *Տե՛ս անդ, էջ 616:*

[61] Ա. ԵՊՍ. ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆՑ, *Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հտ. Բ., էջ 321—322. տե՛ս* Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Ազգապատում, հտ. Բ., էջ 2828:*

[62] *Տե՛ս* ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՍՐՈՒԱՆՋՏԵԱՆՑ, *Թորոս աղբար, էջ 432:*

[63] *«Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1884, էջ 442:*

տակ[64]։ Գրիգոր Դարանաղցին հիշատակում է, որ բացի հայերից, Հակոբիկյան աստրիներից, ղպտիներից եւ հաբաշներից՝ մյուս բոլորը շփոթեցին Զատկի օրը։

Հաջորդ՝ 1729 թ. ծռազատկի նախօրեին թե՛ Հայ, թե՛ Հույն Եկեղեցիները, ունենալով նախորդ ծռազատիկների դառն փորձը, ջանում են ամեն կերպ խուսափել հնարավոր բախումներից։ Աստվածատուր եպիսկոպոսը ներակայացնում է Երուսաղեմի պատրիարք Գրիգոր Շղթայակրի եւ հույն հոգեւորականների երկխոսությունը[65]։

Գրիգոր Շղթայակիր պատրիարքը հնարավոր բախումներից խուսափելու համար առաջարկում է. «...յաւուր տօնի Պասեքի ձերոյ ոչ ոք մտցէ յեկեղեցի Սուրբ Յարութեան յազգէ մերմէ. նոյնպէս եւ ի Պասեքի մերում ոչ ոք մտցէ անդ յազգէ ձերմէ բաց ի մշտնջենաւոր պաշտօնէից յերկուց ազգաց»[66]։ *Այսպիսով՝ Հայ եւ Հույն Եկեղեցիների միջեւ նախօրոք սկսված բանակցությունների շնորհիվ հնարավոր եղավ խուսափել նախկինում տեղի ունեցած խռովություններից եւ արյունահեղություններից[67]։*

РЕЗЮМЕ

Ввиду различных календарных расчетов в течение одного 532-летия 4 раза случалось так, что день праздника Пасхи различных Церквей не совпадал. Так называемые «Кривые пасхи» («Цразатик») создавали большие проблемы, так как были связаны с днем празднования Святого Воскресения, занявшего центральное место в христианском календаре. День праздника Святого Воскресения является ориентиром для большей части передвижных праздников, следовательно, при несовпадении Пасхи отличались также дни других передвижных праздников. В данной статье впервые собраны и рассмотрены почти все библиографические свидетельства об исторических разногласиях, связанных с «Кривой пасхой», которые имеют важное значение в деле изучения и интерпретации взаимоотношений между Армянской и соседними Церквями.

---

[64] *«Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», հրատ.՝ Մեսրոպ վրդ. Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 237։*

[65] Ա. ԵՊՍ. ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆՑ, *Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հտ. Բ., էջ 16–17։*

[66] *Անդ, էջ 17։*

[67] Մ. ՉԱՄՉԵԱՆ, *Պատմութիւն Հայոց, հտ. Գ., էջ 804։*

SUMMARY

Due to various calendar calculations, in the same year of 532, the celebration day of the Easter did not coincide four times in various churches. Different dates of the Easter celebration caused great troubles, because they were connected to the Feast of Holy Resurrection, which occupies a central place in the Christian feast-calendar. The day of the Feast of Holy Resurrection is an indicator for most of the movable feasts; therefore if the Easter date did not coincide, the dates of other movable feasts did not coincide, either. This article for the first time brings together and examines almost all the literary evidences related to the historical events concerning different dates of the Easter celebration, which are important for the study and interpretation of the relations between the Armenian Church and neighboring churches.